ԱՐԵՎԱԼՈՒՏ

Կը հրատարակվի Հորեքշաբթի և Շաբաթ օրերը։
Խմբագրատպարանին տեղն է Ն. Պոլիս Վիզիր խան գեղեցկագիր թիւ 21։
Գալաթիա Սէլանիկ խան մէկին յարկ թիւ 14։
Դուրսէն եկած ամեհաչն յօդուածք կընդունուին ըստ հարկին։

Թերթը 50 փարայ

Գին Տարեկան 100 թերթ կանխիկ՝ դրշ. 100
,, Վեցամսեայ 50 ,, ,, ,, ,, 50
Գաւառաց համար 100 ,, ,, ,, Լիրա 1
,, ,, 50 ,, ,, ,, ,, 1/2
Հրատարակվելու համար եկած ծանուցմանց սահմանուած կ'ընդունի։

Ա. ՏԱՐՒ. ԹԻՒ 20 — 1870 — ՇԱԲԱԹ 28 ՆՈՅԵՄԲԵՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տարոյս սկիզբէն իվեր Նուպար-Շահնազարեան Վարժարանի Տնօրէնութեան, դասատուներուն և յառաջադէմ աշակերտներուն խմբագրութեանդէն հրատարակված, Եւրոպական անուն Գիտական Բարոյական և Բանասիրական ընտիր շարաթաթերթին գործակալութիւնը յանձն առած ըլլալով Մեզմէ գործակալութիւնն՝ իմաց կուտայ ամեն ուսումնասէր հայերուն որ ուզողը կրնայ մեր գրասենեակէն անոր բաժանորդ գրվիլ։

Այս գիտական թերթը որ օրէ օր աւելի կատարելութիւն կ'ստանձնէ՝ առաջիկային մէջ ազգին աւելի օգտակար ըլլալ խոստանալով և միանգամայն ազգիս մէջ լուրջ գազափարներ տարածելու մտադրէ՝ կը վստահինք որ կարդացվի և քիչ մ'ալ ուշադրութեամբ կարդացվի։

ԲՐԴԵՐՈՒՆ ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մեր բարեկամներէն մէկը այս օրերս Պոլսոյ մէկ պանդոկը մտնելով՝ կը տեսնէ որ շատ մը Բուրդեր հաւքըվեր են բակը, կռնակնին դառնը ուսած։ Հետաքրքրութեամբ անոնց կը մօտենայ տեսնելու համար թէ ո՛ւր կը նային։ Անկարելի կ'ըլլայ տեսնել. կը դառնայ բակէն, սանդուխքէն վեր կ'ելնէ ու ճիշդ այդ բազմութեան դիմացի տեղէն վրան նայող սենեակը կը մտնէ, ուր իր բարեկամներէն մէկը կը բնակէր։

Պատուհանէն վար կը նայի. կը տեսնէ այն Բուրդ Պէյը, որ իբրև չափ երկայն հասակ մը ունի ու մէկ երկու ամիս ի վեր քաղաքիս փողոցներուն մէջ շատ կ'երևայ, իր եռեւէն ալ երկու ուրիշ Բուրդ սպասաւորով, որոնք բաւական երկայնահասակ են նէ ալ՝ տակաւին մէկ մէկ կանդուն երկընդնալու են որ իրենց Պէյին հասնին։

Այս Պէյը ամօսակի մը վրայ նստեր էր. քովը ալ իր սպասաւորներէն մէկը, որ քարտուղարն է եղեր, դեմինը նստեր էր. ծունկին վրայ ալ դալարած երկայն թուղթ մը, առջևն ալ շատ մը պղինձէ, քարէ, փայտէ վրայ փորված կնիքներ կային։

Բուրդերը կարդաւ կուգային Պէյին առջևը. անոր ծունկը կը պադնէին ու դնտնէն կնիք մը առնելով՝ քարտուղարին կուտային. ան ալ կառնէր վրան մեջան կը քսէր։ Թուղթին վրայ կը զարնէր. եաքը այդ կնիքը իրեն առաջ Բուրդին կուտար. ան ալ կ'առնէր դեմինը կը դնէր ու մկդի կը քաշվէր։

Այսպէս Բուրդերն ալ այսպէս ընելնուն եաքը Պէյը դարձաւ քարտուղարին ու ըսաւ. հիմայ վկայութիւնները ժող վէ. քարտուղարն ոտքի ելաւ ու բարձր ձայնով ըսաւ. ով որ տեսաւ թէ այս մարդիկը իրենց կնիքը դրին հոս՝ իսէր ճշմարտութեան համար ժող իրեն ձեռագր դիրով վկայութիւն տայ այս թուղթին վրայ։

Օտտապաշին դրեթէ անհրաժեշտ հնչեց այս թուղթը։

Մեր բարեկամը նստած տեղէն այս տեսնելով կը լանդայ։

« Խնդալուս ձայնն առնելով Պէյը երեսը նայեցաւ կ'ըսէ, ո՛վերը խա տեսնելով. Օտտապաշին քովը կանչեց ու քուրդերէն բան մը ըսաւ անոր. ան ալ պատնէն թէ-մէննա մը ընելով թուղթը քարտուղարին ձեռքէն առաւ ու շիտակ իմ դանըվածը սեղեակը դալով ըսաւ. Պէյը հրաման կընէ որ դուք ալ աս թուղթը մէօհրէք՝ և վկայէք որ քուրդերն իրենց մէօհիւրով մէօհրեցին աս թուղթ։ Թէ ոչ՝ ըսաւ Պէյը. դիտնան որ ես հոս ալ բարբարոս եմ թէ որ արդար մարդուն դուք բարբարոս կ'ըսէք։

Այս խօսքին վրայ ալ բաւական խընդալէն եաքը պաշէցի օտտապաշին որ այս հանրագրութեան խորագիրը կարդայ մեզի. ինքը քրդերէն գիտէ նէ ալ՝ տաճկերէն դիր չըճանչնալով ըսաւ թէ, կայնեցէք երթամ Պէյէն հրաման ուղեմ անոր քեահթիլ առնեմ հոս գամ թող ան կարդայ։

Գնաց և Պէյին հրամանովը քարտուղար Բուրդն առաւ բերաւ։

Բուրդն սկսաւ մէկ կողմէն կարդալ մէկ կողմէն թարգմանել։ Բարեկողբ եղիշեանն ալ նաւը նստած՝ անոր ըսածը գրել։

Այհա Բրդերուն հանրագրութեան թարգմանութիւնը որ ուղղված է ընդհանուր ժողովոյ դիւանին։

Այս ընդհանուր ժողով հայ ազգին.

Մենք հին ու նոր դարուց Բուրդերս ընդհանուր շնորհակալութիւն կը մատուցանենք ձեր պատկառելի ժողովին որ անցած օր մեծ պատիւ ըրեր է մեզի՝ մեր անունը ամենայն յարգութեամբ և վայրենի, բարբարոս, դազանաբարոյ ևայլն հատուածներ, վերհանձնական և արժանավայել տիտղոններով բերանը առնելով։

Մենք խոնարհաբար կը յայտնենք, որ արժանի չենք այդ առաքինական և վերհանձնական տիտղոններուն՝ մինչ դեռ անդին Բրուսիացիք և Ֆռանսացիք երար կուտեն։

Ու ապդարև ի՞նչ է մեր ըրածը. բոլորովի՛ն կատակ. մեկերնիս հրացան մը առած կ'ըլլանք. փորձել կուզենք զանի. բայց վառօդին ու գնդակին տուած ըսատակնիս ալ կորանցնել չենք ուզեր. վասն զի ազգքատ ենք։ Ուստի ճամբան ազգքատ հայ մը կը տեսնենք. անոր վրայ կը պարպենք մեր հրացանը. բայց անկի կը մեռնի եղեր. ապ ալ հո՞գ չէ մեզի՞ ինչ. յանցանքը իրն է. Թող իր մորթը քիչ մը պնդացներ որ գնտակնիս միսը չըմտներ։

Կ'երթանք գովը կը հանվեցընենք ղինքը. երբեմն հազիւ մեր նետած վառօդին ու գնդակին ստակը կը գտնենք վրայէն. երբեմն ալ չենք գտներ ու մեր վատնած վառօդին ու գնդակը կսկըծալով կ'անցընենք կ'երթանք։

Ձ'ըլլայ որ միտքերնուդ անցընէք թէ մենք ինչո՛ւ ղենք կը զործածենք. ատի ձեր խառնըվելիք գործը չէ. կուղէք նէ թող ձերիններն ալ գործածեն։

Էյ. ան օրը մեզի համար ըսեր էք նաև թէ վանքերնիդ ալ կը կողոպտենք եղեր. ո՛հ, ի՛նչ մեծ զրպարտութիւն. արդէն ձեր վանքերուն մէջ ի՞նչ կը յատաք որ գտնըվի. մուկ մ'որ ըկնի դլուխ պատուի. դանապանէն բունէ մինչև վանահայր, տարին մէկ երկու անգամ կը սրբեն կը մաքրեն վանքերը. անկէ եաքը մենք մանենք նէ՝ մենէ բան մը վրայ չըտուած դուրս չենք կրնար եղնել։

Վենետիկէն, Բարիզէն, հին աշխարհէն նոր աշխարհէն ամեն կողմէն կուդան ձեր վանքերը կը կողոպտեն՝ հա՛յտէ պակսածը Բուրդերէն կը պահանջէք. կարծես թէ Բուրդերն ու անոնց տունը ձեր վանքերուն պահապանն ու պահարանն են. ձեր կորուսահերուն մեծ մասը Եւրոպայի մեծ մեծ քաղաքներուն մեծ մեծ թանդարաններուն ու դրատուններուն մէջ ձեր աչքին առջև դրած են. չէք երթար այն

տեղէն առնեը՝ եկէը մեղի պէս խեղճերէն կուղէք։

Մե՞նք գողցանք կամ ծախեցինք Հոգւոց վանքի մէջ ձեր թագաւորներէն մէկին յիշատակին եղած միակտուր զմրուխտէ աղաւնին. մե՞նք գողցանք Լևոն թագաւորին ոսկեձոյլ թագը, Հեթում թագաւորին ձիուն համեռը. մե՞ր կոկորդին մէջ հալեցաւ Սիսի վանքին հարիւրաճրագ դեղկաչէն ջահին արծաթը։ Դուք ասոնք մի վնտռէք ու ելէք խեղճ Բրդերուն գողըսէք, աւազակ ըսէք... Ինչ է՞... մեր տունը ֆոթոյան պիտի եփենք՝ աման չունինք, գայեր վանքէն կաթսայ մը գողցեր ենք. Ֆաթօյին դլուխը կը ցաւի կոր, գայեր վանքէն աւետարան մը գողցեր տարեր անոր գլխուն վրև ենք դրեր. վրան ալ քիչ մը արծաթի պըշտուք կայ եղեր.....

Աստուած դայ հախերնուդ։

Մենք մեր ըրածը չենք ուրանար. մենք ալ վանք կողոպտեցինք ու կը կողոպտենք. բայց մէյ մը հարցուցէք մեղի թէ ինչո՞ւ համար կ'ընենք. մեղ ալ մարդու տեղ դըրէք ու օր մը մեզ ալ ժողովի կանչեցէք և մեր ըրածին համար մենէ հաշիւ պահանջեցէք՝ մի վախնա՛ք. մենք ատենօք ձեր հօրը և ձեր հօրը հայրերուն հետ քովէքով կայնած, մեր հայրենեաց թշնամին մէկտեղ վնասեր ենք. հիմայ որ դուք մեզ կուշտ ու կոպիտ կը տեսնէք նէ՝ մեղքը մերը չէ. մեղքը անոնց ճիտն է որ վանքերուն մէջ դպրոցներ բանալով քիւրան ու հայը մէկտեղ չերկրթեցին, վանքերուն մէջ հայու տղաք առին ու անոնց ամեն կերպ ստոնանութիւն սովրեցուցին, մեզ դուրսը ձգեցին որ մենք կոպիտ մնանք ու իրենց վարդապետութեամբ ըրածնուն մէկ հարիւրորդն ալ մենք անկրթութեամբ ընենք նէ՝ կընան պոռան թէ Բրդերն ըրին։

Հիմայ մեր ըրածը բացատրենք. մենք տեսնելով որ վանքերուն մէջ եղող մարդիկը, վանքերը կողոպտելնունետքը, շատ մ'ալ պարտք ցուցընելով թէ ձեր և թէ խեղճ ժողովուրդին վրայ մեծ ծանրութիւն մը կը դնեն՝ մեր խելքին հասածին չափ մտածելով, ձեզ ատոնց ձեռքէն ազատելու համար ուխտ ըրինք, որ վանքերը մնանենք. մէկը ինչ միացեր է նէ—չերկարձնէք որ շատ բան միացեր է հա՛— անոնք ամենն ալ ժողվենք, վանքերը քակենք փլցնենք ու տեղերին անդամ անյայտ ընենք, որ սա անիրաւ սեադէմ մարդիկը ջրին երկնի և ազգին բեռ ըլլալէ դադրին։

Տեսա՞ք հիմայ ձեր գող, աւազակ, բարբարոս, դաղանաբարոյ և ատոնց նման ազգր ազգր մակդիրներով զարդարած և ձեր թշնամին կարծած ձեզի ճշմարիտ բարեկամ Բրդերը։

Մենք Բրդերս արհնկզակ, ինչ առնուով որ կը պատուէք զմեզ, ձեր վանդի Պօշտա վարդապետէն, ձեր հրաշագործէն ձեր ինքնընտիր կաթողիկոսէն, տաճիկ եւ զոզ ձեր Յարութիւն եպիսկոպոսէն, ասոնք ասոնք աւելի՛ մեծ գերջութիւններ ըրած ենք ձեզի։

Դուք մեզ մարդասպան կը կոչէք, չենք ուրանար. մեր ճահիճներէն ոմանք կամ կտտակով (ինչպես վերը ըսինք) կամ փետմանէ կամ նոյն իսկ երիտներուն գաղանի թելադրութեան միամտաբար հաւատալով մէկ երկու հայ սպանած կրնան ըլլալ. անոնք ալ ով գիտէ մենք չսպանենէինք նէ՝ ո՞ր դայլին կամ արջին կերակուր պիտի ըլլային, քանի որ անոնց ճակատը գայլէ կամ դաղանէ ըզըքտըվիլ գրված է եղեր։ Սպաննելէն ետքը սա բարիքն ալ կ'ընենք երբեմն որ հողը քիչ մը կը բրենք ու կը թաղենք մեռելը.....

Ջ'ենք ուրանար մենք մեր ըրածը. դուք ինչո՞ւ կ'ուրանաք ձերիններուն ըրածը. հարցուցէ՛ք մեր հայրիկին, իր վրայ հրացան պարպողները Մուշի վանքին մէջ Քուրդի՞ն էին։ Մենք իրեն ի՞նչ ըրինք որ հիմայ ան ալ մեզ կ'ամբաստանէ.... գժբա՛զդ Բրդեր. Հայրի՛կ ալ մուգաւ ղեզ....

Է՛... մեզի համար ձեզի սա ալ ըսեր են թէ մենք կ'երթանք հայ դեղերը ու տուներն ալ կը կողոպտենք եղեր.... հա՛հ, հա՛հ, հա՛հ..... ա՛ս ալ մեր վըրայ ձգեցին. ամեն մէկ վանքէ մէկ մէկ երկերկու նաւթրաակ կ'ելնեն, գեղէ գեղ տունէ տուն կը պտըտին ու աչքերնին խըխի՛, պտի անուշով խեղճ գեղացիներն ինչ ունին նէ կ'առնեն կ'երթան. ոչխար, այծ, ուլ, հաւ, բամի, սադ, ցորեն, դարի, կով և եզիւղ, կ'առնեն, կը յափշտակեն կ'առևանգեն, խեղճ գեղացիներն մօրէ մերկ կը թողուն, անմի՛ կը թողուն եաքն ալ ձեզի կը դառնան ու Քուրդերն գիայերը կը հարստահարեն կը պոռան. թշուառականները ի՞նչ կը թողուն որ մենք կողոպտենք.... սուտ չէ, մենք չենք ուրանար, մենք ալ երբեմն կ'երթանք. անոնք ուղտեր կը կըլլեն մենք մէղաւոր կը քամենք. թէ որ դանենք նէ՝ անոնց առածին տասանորդն ալ մենք ժողվել կուղենք. բայց շատ անգամ անոնց ցանած որոմն ալ չենք կրնար քաղել. թող այդ նաւթրակները մէյ մ'ալ այդ գեղերն ու այդ տեղերը չը կոխեն, մենք ալ այն առեն ձեր Հայերէն բան մը չենք ուզեր, վասն զի այն առեն իրենց պէտք եղածէն աւելին կունենան և սիրով մեզի ալ կուտան. վասն զի Հայն ու Քուրդը եղբայր են. և օր մը հայուն գլուխը ցաւի նէ՝ դուք անոր օգնութեան չէք հասնիր. հապա մենք դրայն ենք մենք կը հասնինք։

Ա՛հա, պարոն ընդհանուր ժողով, այսու դրութեամբս յայտ առնենք, որ մենք նուաղ գիտակար ենք ձեր ազգին քան ձեր եկեղեցականները, ձեր խոճապաշիքը ձեր ըխսերը, ձեր նաւթրակները և ժողովուրդը լուսաւորելու մասին ձեր ունեցած անհոգութիւնը։ Եւ եթէ ձեր մէջ գտնըված յանցաւորները չը պատժած կամ պատժել չը ուզած մեզ պատժել ուզէք՝ վայ՛լա՛ն ամենքնիս մէկէն ինքզինքնիս բռնած կը նետուինք ու չենք պատժվիր կն աւալ գուք ձերիններէն պատժեցէք ձեր ժողովուրդը լուսաւորեցէք, ապագային մէջ մեզ պատժել ուզելու կարօտութիւն չ'ենք ունենար։

Մենք աւալ մեր դրացի հայերուն հետ հայր ու տղայ քոյր ու եղբայր ենինք. համարիան և համաշօր, մեղ անոնց պիտոյից ճիւք ցուցընողները ձերիններն են. ձերիններն որ ձեզի չափ և ձենէ շատ աւելի կ'անիծենք. նախ որ մեզ մեր եղբարցը պարշելի ըրին, երկրորդ որ մեզ իրենց կամքին ծառայեցընելու համար միշտ կաչառելով ծուլութեան և անգործութեան ու անբանութեան սովրեցուցին, որով եթէ հիմայ երբեմն երբեմն մեր եղբայրներուն վրայ յարձակելու կ'ստիպվինք՝ մեր անօրինութենէն ու գործելու անկարողութենէն է և ո՛չ մեր չարութենէն. մեղ ճանչողները վկայ են։

Երբոր այս հանրադրութեան ընթերցումը լմնցաւ՝ խնդալով մը պէյին գարձայ

Պէյը երեսս նայեցաւ ու ըսաւ,

Վա՛յ՛ դա. ըսել է եղեր չիտակ չէ մի։

Ոչ ըսելու չէր գար. այո՛ պատասխանեցի։

Պէյը ուրախացաւ և իր ձեռքի ջրաեղ լինձի երկնցուց. հրամմէ ըսելով։ Ես ալ պատուհանէն ներս առի ու քովս դրի,

Քարտուղարն ու օտասլաչին ձգեցին գացին։

Երկու օրէն ետքը խնացայ որ այս հանրադրութիւնը դիւանին յանձներ են Քուրդերը։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ԻՀԻԱՆԴԱՆՑ

Թէ որ մեր հայերուն մեծ մասը հայերէն դիտնային նէ՝ երբեմն երբեմն դըրկիք յօդուածներուս վրայ ծանօթութիւն բացատրութիւն և հայերէնի դատաստանութիւն ընելու կարօտ չէինք ըլլար. ի՞նչ ընենք. աս ալ մեր անօրէն մեղացը կատանք որ հայերը ամեն բան կը սիրեն և միևակ հայն ու հայերէնը չ'են սիրեր։

Հիմայ համարենք նայինք։

Հայերէնի մէջ մանկիկ մը կոյ որ բառի մը ծայր կըցվելով այն բառին յուցած բանին չնուած եղած կատարած տեղը կը ցուցընէ. ասի ոթան կամ բան է. օրինակի համար. գբօսարան՝ գբօսանք ընելու տեղ. մօմարան՝ մօմ չինելու տեղ. սրճարան՝ սուրճ չինելու կամ եփելու տեղ. համալսարան՝ համալ սիրող և այլն. գբօղարան՝ (Իւսկիւտար պաղլար պաչին) կաղինան բօղ չինելու տեղ, և այլն։

Մէյ մ'ալ անոց կամ նոց մանկիկ մը կոյ որ բառին ծայրը կըցվի նէ՝ այն բառով ցուցված բանին դանըված կամ գրված տեղը կը ցուցընէ, ինչպես. անկեանոց՝ անկեաններու տեղ. աղքատանոց՝ աղքատներու տեղ. ձեռնոց՝ ձեռք դնելու ձեռք պահելու տեղ և այլն։

Մօտերս Ս.բարատայ նահանգէն նոր եկող հայ մը հիւանդանոց այցելութիւն կ'ընէ։

Դռնէն ներս մտնելով քիչ մը առաջ կ'երթայ. աչ կողմը դուռ մը վրայ կը կարդայ Տեսուչ. բարեւ Տէսուչ սենեակ կըսէ բայց պատասխան չ'ընդունիր։ Ձախ կողմը կը դառնայ. կը նայի որ հոն ալ դուռան մը վրան ու խոշոր գիրերով Տառանապետ մը կայ. անոր ալ բարեւ Տառանապետ դուռ կ'ըսէ՝ ան ալ ձայն չըտար. մտդիը ինքիրեն կ'ըսէ. կերևայ որ տանք համր են. ուտի առաջ անցնինք ու սրտնից կենդանիները ալ տեսնենք. անդին տադին քիչ մը առաջ կ'երթայ ու դուռան մը վրայ սա կը կարդայ. անասնաբան։

Հ՛ա, հիմայ հասկըցայ. հայերը այնչափ առաջ գացեր են որ անասուն ալ կը չինեն եղեր. անոր համար Տէսուչն ու

Ա.յս տարի՝ Փարիզ խաղացված լանսիէները — վերջին մնաս։

Մառանապետը ինծի հետ չը խօսեցան. վայ անիրաւ հայերը. մենք Ս.րաստանի մէջ այնպէս հաւատացած էինք թէ Տաճկաստանի հայերը հիմայ անատուններուն լեզու կուտան ու ատուն կը չինեն, մինչդեռ ընդհակառակն ատուններն անատուն կ՚ընեն եղեր հիմայ։ Ս.րդեօք կարելի է՞ր որ ներս մտնէի ու տեսնէի թէ ինչպէս ատունն անատուն կ՚ընեն։ Երկու քայլ առաւ՝ բայց չէ ըսաւ, ներս մտնեմ նէ՝ կ՚ըլլայ որ ես ալ անատուն կընեն։

Ուսաի չուտ մը հեռացաւ այն տեղէն, և դէպ ի ագին եկաւ. ագին ալ դրան մը վրայ տեսաւ սանկ դրված, հետաքրքրեցաւ։

Չ՚ա. հոս ալ հիւանդ կը չինեն եղեր հասկըցայ. ուշի ուշով մտքէն անցուց որ այս պահին ներս մտնէն հետը խլուած եղբ, չ՚ես հասաւար նէ՝ այս յարկին անունը կարդայ։

Մարդը այս ալ կարդալէն ու այս խորհրդածութիւնն ալ ընելէն ետքը, օտա տեղը չատ չը կենամ, կ՚ըլլայ որ ես ալ հիւրնդնամ ըսելով անկէ երկու քայլ անդին գնաց ու տեսաւ որ ուրիշ դրան մը վրայ ալ ենթադրած դրված է՝ աս տեսնելուն պէս ալ ամենեւին չը կանգնելով սկսաւ դեպ ի դուռը վազել. հոս ալ խենդ կը չինեն եղեր. անոր համար այս տեղ ամէն կողմ խենդուս խելառ բաներ կը տեսնեմ. քիչ մ՚ալ կայնիմ ես ալ խենդենամ պիտի։

Ս.րտօրնօք դունէն դուրս ելաւ. երկու քայլ առաւ ու ետ դարձաւ նայիմ ըսաւ սա դրանը վրայ ալ դուռ դրվա՞ծ է։

Կանկ առաւ ու ըսաւ ինքիրեն "տեսա՞ր որ իմ ալ խենդենալուս բան մը չէ մնացեր։

Ս.յս ըսաւ ու նորէն արտօրնօք հեռացաւ հիւանդանոցէն։

Ս.յս խեղճ մարդուն սիրտը այնչափ վախ մտեր է եղեր որ մինչև հիմայ երբեմն երբեմն Ս.ատուածնիդ կը սիրէք նէ չիտակը պրուցեցէք, վրաս խենդութեան նշան մը կը տեսնէ՞ք ինչպէս եղեր իր բարեկամներուն։

ԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԻՍԿԻՒՏԱՐՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒՀԵԱՅ

ԿԱՐՄԻՐ — ՏԵՏՐԱԿԸ

Կը գտնըվի խնամակալութեան Տիկնայց տուները։

Սպիկով չը ծախվիր, ձրի կը բաշխըվի, և հետեւալ օրը նա կ՚ուղվի։

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՏԵՂԻՆ — ՏԵՏՐԱԿՆ ԱԼ

Ս.րդէն հրատարակված է և կը գտնըվի, Բերայի չիտակ փողոցը, Միւսիւ Քօմէնտինկերի խանութը։

Գինը դիւրամատչելի է։

Խ. Տ. ԵԱՆ

ՀԱՅ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԱՅՐԱԹՈՂԱԿԱՆ

Ս.ինտրատէթեաց

ՑՈՅՆ ՓԱՀԱՆԱՑ ՄԸ

Հարիւր եղիս աներեսէ բաղկացեալ այս հետաքրքրական վէպը՝ Եէնի-դաբուի բոլոր դրավաճառաց քով կը ծախվի, հատը մէկ փրէնկի ոսկիի։

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ

ՀԱՅ ԵՐԵՍՓՈԽԱՆԵՐ

Պիտի հրատարակվի Ս.րամեան Տարեցոյցին մէջ։

ՍՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ

(Եէնի-շէհէրի է վէր)

ԿՌՈՒԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾ ՄԸ

ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ

Փող , Հայրենիք , Տիեզերք կամ Հո-
րիզոն անուն թերթերէն մէկուն՝ կամ ա-
մենուն ալ մէջ ։

ՀԵՂԻՆԱԿ

ԱՎԱՏՕ ԳՈՌԱՄ—ԳՈՉԵՄԵԱՆ

ՍՐԲԱԳՐԻՉ

Շ · Ա · Տ · ՝

ՏԱՊԱՆԻ ՏԱԿ

ՀԻՆԱՆԿԻՐԻ ԲՈՒՐԳԸ

կամ

ՅՈՒՆԱՑ ԵԳԻՊՏՈՍԻՆ ԵԼՆԵԼՔ։

Քնարերգութիւն մարգարէական

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՍ ԵՒ *իմի* տեսիլ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԵԾԱԲԼԹՐՕԲՈՒԼՕՍԻ

ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՎԻՍՄԱՐՔՕԲՈՒԼՕՍԻ

Կը ծախվի բոլոր Ցոյն խանութպանաց
քով . հատը 0 0 պրուշ ։

ԵՒԵՍՈՒՆ ԼԻՐԱՑԻ՝ ՏՈՒՆ ՏԵՍՆԵԼ ՄԸ

Անցեալները ֆաուլեայի վաճառա-
կան, երկայն հասակով դեղին մաղերով և
չորուկ պարոն մը Տրապիզոնի օրթա գե-
ղերէն նաև մը ֆաուլեայ բեռցուցած՝ ին-
քը կը վազէ Պոլիս ՝կուգայ որ ֆաուլեա-
ները տեղաւորցընելու շահմարան մը գըտ-
նէ ։ Ա.յս շահմարանն ալ գտնելէն ետքը
Գումքապու կ'երթայ ու հոն ալ հանդիսա
ընելու տեղ մը գտնել ուզելով տուն փըն-
տռելու կ'երթայ ։

Առաջուց իրեն նշանակված կամ ա-
մենևին չպիտցած (մէչուխէչան չիտակը
չ'ըսեր) մէկ տանը դուռը կը զարնէ ։ Տան-
տիրուհին մինակ էր տանը մէջ ։ Մեր ֆա-
ուլեացի աղբարը հանըմ վարձու տուն
կուզեմ , կրնա՞մ մի այս տունը տեսնել
կ'ըսէ ։ Միամիտ Տիկինը ամենևին անկասկած
հրամեցէք պողտեցէք կ'ըսէ օտարականին ։
Ան ալ վեր կ'երթայ կը պըտըտի և տունը
թշնամանելով՝ մէջի աղրողներուն վրայ ալ
զարմանք կը յայտնէ . զարմանքը ագանչա-
նաց կը փոխվի , և մեր այս նոր Պօղոս ա-
դաքելը երկինքէն ու սիրտէն ձայն մը
լսելով՝ յանկարծ Հաւատքի կուգայ ու
Աստուածածնի ոտքերուն վաթտըվելով
պաշտել կուզէ զանի ։ Տիկինը կրնայ որ
այս առաքեալը ճշմարտիւ սրբացած Պօ-
ղոս մը չէ հաւա կատարեալ Սօղոս մ'է ,
ինքզինք աղատելու չանալով որչափ ձայն
ունի նէ դրացիներն օգնութեան կը կանչէ ։

Յերեկ առեն տունէ մը օգնութեան
կանչըվի նէ չատ մը կիներ ու թաղին պա-
խալըն ու ախտերը կրնան հասնիլ . այս ան-
գամ ալ այսպէս կ'ըլլայ · դրացուհիք և
պախալ Եօրկին տուն կը վազեն . կը տես-
նեն որ այս Սօղոսը խեղճ կնկանը ոտքը
խածնելու կ'աչխատի . մէկ մէկ վայտ կառ-
նեն ու ասի ծեծելու կ'սկսին ։ Պաքալ Եօր-
կին որ այս ֆաուլեացիին , անոր հօրը ,
մեծ հօրը , հօրեղբօրը և այլն ամենուն հետ
ալ առուտուր ըրած էր , հետևաբար ասոնց
ամենն ալ չատ աղեկ կը ճանչէր , զարմա-
ցած ասոր երեսն ի վեր կը նայէր ու ինքի-
րեն կ'ըսէր . ասոր հայրը և այլն ասանկ
առուտուրներ չէին ըներ , աս ո՞ւրկէ սոր-
վեր է ասա արհեստը ։

Բայց դրացուհիք ասանկ մտածու-
թիւններ չ'ունենալով իրենց դրացի Տիրու-
հին ոտքը փաստըվող օձը ծեծելու ու
սատկըցընելու զբաղած էին ։

Ֆաուլեացի Պարօնը այս կիներուն
ոտքերուն մէջ սեղմէն սողոսկելով հաղիւ
դրանը միջևէն դուրս կ'ելնէ կը փախչի ։

Քանի մը օր ետքը դատաստանական
խորհուրդի նախագահն ասա ֆաուլեացին
կը կանչէ ու լսելէն որ կ'ըսէ դուն ֆա-
ուլեայ ունես եղեր դալիք , ես ալ քեզի
մաղազայ մը պատրաստեցի . ուստի հրամէ
ան մաղազան . քիչ մը մութ է բայց հոգ
չէ ։

Ֆաուլեացին կ'ըսէ . ես քառասունու-
հինկըս կ'երթամ կոր , մութ մաղազա մը-
տած չ'ունիմ . ես մուկէն կը վախնամ . և
աղաչելով վերջապէս կը հասնէ որ չը մը-
տած մաղազային , չը բռնած տանը և չը
պաշտած դիւցուհիին վարձքը վճարէ . դա-
տաստանական խորհուրդն ալ այս դործին
վրան դոյէ ։

Բանը կը մնայ 30 լիրա ճարելուն ,
ֆաուլեացիները Տրապիզոնէն դեռ հասած
չէին որ անոնց ստակէն վճարէր . հիմայ
ի՞նչ ընէ . հինէն մնացած ալաճայ ֆա-
ուլեայ մը ունի . ուստի այն ալաճային ըս-
տակով կը վճարէ այս 30 լիրան . դատաս-
տանական խորհուրդն ալ այս ստակը Քում-
քապու կը ղրկէ այն տանտիրոջը որ մինակ
իր տունը ցուցընելով վարձք կը պահանջէր ։

Պարօն ֆաուլեացիին խելքը դլուխը
կուգայ . բայց տուած ստակին մնդուքը
դադրիլը ցատկելով՝ այս ստակին փոխա-
րինութիւնը կուզէ . տուրուտի մը եկած
էր . փոքը ըրած էր , Լաւ ի կ'ըսպասէր .
բայց այս անդամ անծանօթի մը վրայ փորձ
ընել չ'ուզեց . վասն զի այն փորձը սուտի
նստած էր ։ Ծանօթի մը , բարեկամի մը և
կարծենք ազդականի մը տունը կ'երթայ
այս անդամ . ազդական ազդականի հետ
համարձակ կ'ըլլայ . ուստի և կրնայ բա-
րեւէն ետքը չուտ մը ինչպէս ըլլալնին վե-
րէն վար հարցընել վնտռտել ։

Տիկինը հրաման կ'ընէ որ մտերմու-
թեամբ չը խօսի իրեն հետ . ֆաուլեացին
համարձակութեամբ կը խօսի . Տիկինը հը-
րաման կ'ընէ որ եվանուիթիւն բանեցընե-
լու չ'երթայ . ֆաուլեացին բռնակալութեան
կը դիմէ , սպասաւորները վեր կը վազեն
ձերբակալութեան կը դիմեն . ֆաուլեացին
հաղիւ կը փախչի այս անդամ ծեծ չ'ուտե-
լով եւ աղաչելով որ այս դործը մարդու
չը պատմեն ։ Անոնք ալ իր աղաչանքը կ'ըն-
դունին և Մէչուխէչային զատ ուրիշ մարդ
չը դիտէ այս դործողութիւնը ։

Մէչուխէչան կ'ըսէ թէ այս ֆաուլ-
եացիին եաւէն պիտի պըտըտի որ աղաւորիկ
ծեծ մ'ալ ուտէ նէ՝ ան ալ դայ մեզի ի-
մացընէ ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Վերապյլէն եկած վերջին լուրերուն
վրայ բաշավուռաճի վաճառականները հա-
րիւրին 10 վրայ դրին . . . . վիրաւորեալ-
ները օրէ որ չառնալու վրայ ըլլալով ։

Ա.յս տարի դարձուշ չատ չինվելուն
պատճառովը թուղթերը հարիւրին 40
վրայ դրին ։ Ֆուանսացիք ալ աչխարհի
բարւոյն համար լրագիր հանելէ դադրե-
ցան. որով հարիւրին 30 լիզեցույին ։

Ա.յս տարի ցորենը քիչ էր . մարդա-
սէր Բարիզցիք անօթի կենալու ուխտ ըրին
որպէս զի հացը չըսուղնայ ։

Րումելիի երկաթուղեաց վիճակահա-
նութեան այս անգամ քաշված թիւերուն
տոմսակներէն 600000 ֆրանգ վաստկող
տոմսակը որու ձեռքն է նէ՝ թող ըսէ
մեզի տայ ու 1000000 փարայ պարգեւ
ընդունի ։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ՄԻԻՆԱԼՊԱԹԸ ԻՇՆ.Ր

Տաճիկ դրականութեան բարեկարգո ւ
թեան առաջին ձեռնարկու բազմահմուտ
Շինասի էֆէնտիին նոր դրութեամբ հը րա-
տարակած վերոյիշեալ բնութ բանասթեղծա-
ծուած վերնադրով հրատարակած դրքույկը
վաճառվելու եղնելով Տաճկադէտ աղդայ-
նոց ուշադրութեանը կը յանձնեմք ։

Ա.յս դրքույկը կը ծախվի . Բ . Դրանը
դիմաց՝ Թաւիէլ Էֆէնտիի տպարանը . շուկան՝
դրավաճառ Պէքիր էֆէնտիի խանութը և
այլն ,

Գին 10 պրշ

Սուլթան Ա.Հմէտի կողմերը , Ա.թ
մէյտանին Սէթին վրայ Ֆիլըուզ աղա ճա-
միին կից դեղին ներկով և կանաչ դռնով
թիւ 8 տունը Պաղտատի Նուրի էֆէնտիին ։

Սարայի , սրապմի , խելատպնեղու ,
խելի , կէս գլխու ցաւի , սրթմայի , սը-
րտճաի , դիւահարի և ուրիշ ասանց նման
ցաւերու և ախտերու կարգալով և ա-
ուծով ազդեցութիւնը ու բժշկութիւնը
ամեն տեսն լաված ըլլալը ամենուն իմա-
ցընելու համար յատկապէս ծանուցում
կ'ըլլայ ։

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ
Յ . Գ . ՍԲՎԱՃԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՎԷՋԻՐ ԽԱՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ ԹԻՒ 21

Ի ՏՊԱՐԱՆԻ Տ . Կ . ԱՍԼԱՆԵԱՆ

ԼՐԱԳՐՈՑՍ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆԸ ՊԱՏԱՍԽԱ-
ՆԱՏՈՒ ՉԻ ՏՊԱՐԱՆԸ